ՈՒԻԹՄԵՆԸ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՄՈԴԵՌՆԻՍՏՆԵՐԸ

Մեծ է Ուոլթ Ուիթմենի դերը ամերիկյան գրականության ձևավորման ու զարգացման գործում: Նորարար բանաստեղծի ազդեցությունը զգալի է հատկապես 20-րդ դարի սկզբում գեղագիտական հեղափոխություն իրականացնող մոդեռնիստների վրա: Բնական էր, որ բարենորոգչական այդ գործընթացներին «մասնակցեր» նաև «Մոդեռնի տարիները» և նույն հանգով գրված այլ ստեղծագործությունների հեղինակը, ավելին, համարվեր նաև այդ շարժման նախակարապետը: Ուիթմենյան մոդեռնիստների շարքում են դասվում Լ.Աուլիվանը, Ֆ.Լ.Ռայթը՝ ճարտարապետության, Ռ.Հենրին, Մ.Հարթլին, Ջ.Մերինը, Ջ.Ստելան՝ գեղանկարչության, Ա.Դունկանը՝ պարարվեստի, Է.Փաունդը, Վ.Կ.Վիլյամսը, Ու.Ստիվենսը, Հ.Քրեյնը՝ պոեզիայի, Գ. Ստեյնը, Շ.Անդերսոնը, Ջ.Թումերն ու Ջ.Դ.Պասոսը՝ արձակի մեջ: Նրանց համար Ուիթմենը միակ բնածին հանճարն էր ու ազատության խորհրդանիշը:

Մոդեռնիզմն Ամերիկա ներթափանցեց մասամբ որպես Ուիթմենի կոչերի կոլեկտիվ արձագանք, իր ձևի մեջ ուրույն պատասխան՝ պատասխանողին: Հարց է ծագում՝ ինչո՞ւ հենց Ուիթմենի: Ո՞րն էր ներկայության այս տարօրինակ զգացողության պատճառը: Ամենայն հավանականությամբ, Ուիթմենի բարդ ու խորհրդավոր անհատականությունը՝ հայր, որին ավելի շատ պետք է ընդդիմանալ, քան՝ ենթարկվել, ավագ եղբայր, որին կարելի է վստահել ցանկացած գաղտնիք, սիրահար, որի ստեղծած խորհրդավոր նշանների միջոցով սիրո բոլոր ջատագովները կարող են ճանաչել ու ողջունել միմյանց, ի վերջո, նվիրյալ պոետ, որի առաքելությունն է անվերջ կերպարանափոխվել՝ ի շահ սեփական ժողովրդի և կյանքը որպես փրկագին վճարել հանուն նրա ապագայի: Նկարիչ Ռ. Հենրին 1909 թվականին հրատարակած ակնարկում գրում է. «Ինձ թվում է, որ մարդը, նախքան ինքնաարտահայտվելը, պետք է առաջին հերթին ճանաչի սեփական անհատականությունը, նոր մարդուն, որը տարբեր-

վում է մյուսներից: Ուոլթ Ուիթմենն իրականացրեց այդ»:[1] Մարսդեն Հարթլին, խոսելով երկու մեծ նորարարների՝ Ուիթմենի ու Սեզանի մասին, գրում է. «Այս ռահվիրաներն ավելի շատ բան են արել արվեստագետի ազատության ապահովման, գեղանկարչության ու պոեզիայի «ազատագրման» համար, քան նոր ժամանակների ցանկացած նախածեռնորդ: Նրանց միջոցով նկարչությունն ու պոեզիան բառացիորեն դարձել են ազատ, և նրանց շնորհիվ է, որ երիտասարդ գեղանկարիչներն ու բանաստեղծներն ինքնաազատագրման նոր ոլորտներ են նվաճել»:[2] Ա. Դունկանն իրեն համարում է «Ուոլթ Ուիթմենի հոգևոր դուստրը»[3], դրանով փաստելով, որ Ուիթմենի կերպարը վավերական նշանակություն է ունեցել նաև կին արվեստագետների ձևավորման գործում:

Ուիթմենի պոետական գործունեությունն առանձնահատուկ նշանակություն ունեցավ 20-րդ դարի առաջին կեսի ամերիկյան պոեզիայի զարգացման համար: Նրա ինքնատիպ գրելաոճն ընդունված է անվանել «ուիթմենականություն»՝ երկար, խիտ, հատվածական, անձև ու տաղաչափական կանոններին չենթարկվող բանաստեղծական տող, որն ընկալվում է որպես վավերականության և ազատության ճշմարիտ նախանշան: Գեղանկարիչ Ջ. Ստելան գրում է. «Ուոլթ Ուիթմենի բանաստեղծությունները, որ ճախրում էին Օգնության ճերմակ սավառնակի նման, իմ Արվեստի առագաստանավերն առաջնորդում էին Երևակայության անծայրածիր երկնագույն հորիզոններում»[4]: Ուիթմենի ժառանգությունն օգնում էր նորօրյա արվեստագետներին ընկալել և ճանաչել «մոդեռն»-ը ինչպես սեփական էության մեջ, այնպես էլ՝ շրջապատում: Մոդեռնի զգացողությունն առատորեն սփռված է Ուիթմենի ստեղծագործություններում, որոնցում արտահայտված հիմնական գաղափարները յուրացրել ու զարգացրել են մոդեռնիստները. ձևը հաջորդում է գործառնությանը /սա հայտնի է որպես «օրգանականության» գաղափար. «Ամենաանաղարտ արտահայտությունն այն է, որն իրեն արժանի ոլորտ չի գտնում և ինքն է ստեղծում այդ ոլորտը»[5]/, մար-

---

[1] Robert Henri, The Art Spirit, Philadelphia: J.B. Lippincot, 1923, էջ 135:
[2] Marsden Hartley, Adventures in the Arts, New York: Boni and Liveright, 1921, էջ 35:
[3] Isadora Duncan, My Life, New York, Liveright, 1927, էջ 31:
[4] Տե՛ս Alan Trachtenberg, Brooklyn Bridge: Fact and Symbol, Chicago: University of Chicago Press, 1979, էջ 190:
[5] Walt Whitman, The Complete Poems, Edited by Francis Murphy, Penguin Books, England, 1977, էջ 750: Հետագա բոլոր մեջբերումները՝ նույն տեղից:

մինն ու հոգին նույնն են /«էլեկտրական մարմնի» մասին հիշատակումը/, բոլոր մարդիկ ու իրերը հավասար են և իրավունք ունեն նախընտրելի լինել արվեստի համար /«Բոլոր ճշմարտությունները սպասում են բոլոր իրերի մեջ», «Ամեն կենդանի գոյացություն ունի արտահայտման իր ձևը»/, համայնական կյանքը հերոսական է ու «աստվածային միջինն» է /«Եվ պեղել բառը ներկա ժամանակի՝ En-Masse»/, արվեստագետն ունի քրմակերպ դերակատարում, արվեստն անհրաժեշտություն է, և, ամեն դեպքում՝ կյանքը գերակայություն ունի արվեստի նկատմամբ: Վերջին արտահայտությունը ենթադրում է մոդեռնի վերաբերյալ Ուիթմենի սեփական տեսության գերակայությունները. պոեզիայի հաջողությունը չափվում է ընթերցողի վրա ունեցած շոշափելի, վերափոխիչ ազդեցությամբ և ապագան գեղարվեստորեն կերտելու ներունակությամբ:

Մոդեռնիստների վրա Ուիթմենի ունեցած ազդեցությունը պայմանավորված էր ոչ թե նրանով, որ ստեղծագործությունների մի մասում նա միջնորդավորված ներկայացնում էր Էմերսոնի, Նիցշեի ու Բերգսոնի հայացքները, այլ սեփական հզոր, եզակի ու համոզիչ ձայնով, որի համար վաղ շրջանի մոդեռնիստները նրան համարում էին մեծություն, որով պետք է ոգեշնչվել և ընդօրինակել, քանի որ նա էր լայն բացում դռներն ու միավորում բոլորին՝

Պոկե՛ք կողպեքները դռներից,
Հենց դռնե՛րը պոկեք կողափայտերից:[6]
/«Երգ իմ մասին»/

Ուիթմենն ընդարձակ, ազատ տարածքներ է առաջարկում ընթերցողին, նրան առաջնորդում դեպի արևի լույսը, սահմաններից ու սահմանափակումներից զերծ վայելքն ու հոգու խաղաղությունը: Նա սովորեցնում է, որ «ես»-ը՝ անձը, ինչպես նաև՝ «ներկան», «այստեղ»-ն ու «այժմ»-ը բավականաչափ ներունակ են, և իզուր են ամեն կարգի դադարները, անշարժացումներն ու սահմանափակումները՝

Գիշերն արձակում եմ դիտակետս, տեսնում
հեռվում առկայծող համակարգերը,
Եվ ամենը տեսնում եմ բազմապատկված
այնքան, որքան կարողանում եմ հեռավոր



[6] Նույն տեղում, էջ 86: Մեջբերումների թարգմ. հեղինակինն են:

համակարգերի շուրջպարը գաղտնագրել:[7]
/«Երգ իմ մասին»/

Ուիթմենի ժառանգությունից ամերիկյան մոդեռնիստներին ամենասրտամոտը անկեղծությունն ու շիտակությունն է՝ բանաստեղծական բաց ձևեր, բաց զգացումներ, բաց ապրելակերպ, բաց հայացք՝ դեպի շրջապատող աշխարհի չգովերգված ճշմարտությունները, գեղեցկություններն ու գարշահոտը: Այս անմիջականությունից ոգևորված, շատ ստեղծագործողներ կարողացան սեփական ձեռագիր ունենալ, թոթափել բարեկիրթ մշակույթի բարոյախոսությունն ու ճնշումը և տուրք տալ հուզականությանն ու ճշմարտախոսությանը: Սա անչափ կարևոր էր ոչ միայն մոդեռնիստ-գեղանկարիչների ձևավորման համար, այլ ստեղծագործական ավելի բարդ ոլորտում՝ պոեզիայում: Բանաստեղծներն էին, որ անվերջ պայքարի մեջ էին Ուիթմենի հետ, և նրանց գրվածքներում էր, որ հատկապես նկատելի էին սեփական պահանջմունքները բավարարելու՝ հայր-Ուիթմենից ժառանգած անջնջելի հետքերը: «Երգ պատասխանողի մասին»-ում Ուիթմենը գրում է՝

Գովերգողի բառերը լույսի ու մութի
ժամերն են ու բոպեները, պոեզիա
ստեղծողներինը՝ հենց լույսն ու մութը...
Գովերգողները չեն երկնում,
Պոետն է միայն ծնունդ ունենում:[8]

«Գովերգողների» և «պոետների» նման տարանջատումը սայթաքում չէ, շեշտադրում է, «տիեզերական խորաթափանցություն»: 1930թ. Հ.Քրեյնը գրում էր. «Ամերիկայի հոգեկան խանգարվածության ամենաբնորոշ ու ամենահիմնավոր արտահայտությունը դարձյալ կարելի է գտնել Ուիթմենի ստեղծագործություններում: Նա ի վիճակի էր Ամերիկայում բոլորից լավ համակարգել այն ուժերը, որոնք ամենաանհնազանդն էին թվում՝ նրանց միավորելով տիեզերական խորաթափանցության շուրջ: Նա հեղափոխական էր՝ հանճարի վերաբերյալ Քոլրիջի սահմանման ամենաուղղակի իմաստով /հանճարը ստեղծում է սեփական օրենքները/, սակայն նրա կտակը դեռևս պետք է իրա-

---

[7] Նույն տեղում, էջ 117:
[8] Նույն տեղում, էջ 199:

գործվի»:[9] Քրեյնը առաջ է քաշում Ուիթմենի ժառանգության երկու կարևոր առանձնահատկություն, որ մինչև 1920-ական թվականները դուրս էր մնացել տեսադաշտից: Առաջին. Ուիթմենի գրական ժառանգությունը չի սահմանափակվում միայն ուրույն գրելաոճով, տողի ու ընդարձակ պոեմի ինքնատիպությամբ, այլ «տիեզերական խորաթափանցությամբ», որ կառուցված է «անհնազանդ» և հակասական նյութի վրա: Երկրորդ. նրա «կտակը դեռևս պետք է իրագործվի»: Վերհիշենք Փաունդի խոսքերը. «Նա գիտակցում է, որ ինքը սկիզբ է և ոչ թե՝ դասական ավարտ»:[10] Ավարտուն երևալու ցանկության բացակայությունը, ամեն ինչ կրկին զրոյից սկսելու առավելությունն էլ, ամենայն հավանականությամբ, Ամերիկային հատուկ հոգեկան այդ խանգարվածությունն է:

«Մոդեռնի տարիները» բանաստեղծության մեջ Ուիթմենը հարցնում է.

Արդյո՞ք մարդկությունը կազմում է en-masse,
այլապես զգուշացեք, բռնակալներն
ակտիվանում են,
Աշխարհը քմահաճ հանդիպում է նոր
դարաշրջանի կամ թե համընդ-
հանուր աստվածային պատերազմի,

Չծնված արարքներ, երևույթներ, որ կլինեն շուտով, իրենց ձևերն են ուրվագծում իմ շուրջ...

Անկատարը, ավելի ահռելին, քան
երբևէ, առաջանում է,
Առաջանում է դեպ ինձ:[11]

Դեպի նոր ժամանակների արվեստն ու նորացված մշակույթը մղվող երիտասարդ ամերիկացիներն ըստ ամենայնի յուրացրել էին Ուիթմենի խոսքերը և հետմահու կյանք սահմանել նրա հայացքների համար, որ հստակ ծրագրային բովանդակություն ու երանգավորում էին տալիս ձևավորվող ամերիկյան մոդեռնիզմին:

---

[9] The Complete Poems and Selected Letters and Prose of Hart Crane, New York: Doubleday Anchor Books, 1966, էջ 263:
[10] Ezra Pound, Selected Prose: 1909-1965, New York: New Directions, 1973, էջ 145:
[11] Walt Whitman, The Complete Poems, Edited by Francis Murphy, Penguin Books, England, 1977, էջ 499: